

Ամեն բառ գիտի ինչոր բան արատավոր շրջանից

հեղինակ՝ Հերտա Մյուլլեր

թարգմանիչ՝ Մարիամ Եփրեմյան

ԹԱՇԿԻՆԱԿ ՌԻՆԵ՝Ս: Հարցնում էր մայրս ամեն առավոտ, մինչև փողոց դուրս գալս՝ դարպասի մոտ: Ես չէի ունենում: Եւ քանի որ չէի ունենում, վերադառնում էի սենյակ եւ թաշկինակ վերցնում: Ես ամեն առավոտ թաշկինակ չէի ունենում, որովհետեւ ամեն առավոտ սպասում էի հարցին: Թաշկինակն ապացույցն էր այն բանի, որ մայրիկն ինձ առավոտյան պաշտպանում է: Օրվա հետագա ժամերին ու գործերում ինքս իմ հույսին էի: ԹԱՇԿԻՆԱԿ ՌԻՆԵ՝Ս հարցն անուղղակի քնքշանք էր: Ուղղակին կողմնապահություն կլիներ, իսկ գյուղացիների մեջ դա բացակայում էր: Սերը քողարկվել էր հարցով: Միայն այդպես այն կարող էր արտասանվել. կոպիտ, հրամայական տոնով՝ աշխատանքի ոճով: Չայնի կոպտությունը նույնիսկ ընդգծում էր քնքշանքը: Ամեն առավոտ ես երկու անգամ էի դարպասի մոտ լինում. առաջին անգամ՝ առանց թաշկինակի, ապա՝ թաշկինակով: Միայն դրանից հետո էի փողոց դուրս գալիս, կարծես թաշկինակի հետ մայրիկն էլ լիներ հետս:

Իսկ քսան տարի անց ես քաղաքում՝ արդեն վաղուց միայնակ, թարգմանչուհի էի մեքենաշինական գործարանում: Առավոտյան արթնանում էի ժամը հինգին, աշխատանքն սկսվում էր վեցն անց կեսին: Առավոտները բարձրախոսից գործարանի ամբողջ բակով հնչում էր հիմնը: Կեսօրի ընդմիջմանը երգում էր աշխատողների երգչախումբը: Սակայն ուտելու նստած աշխատողներն ունեին սպիտակ թիթեղի նմանվող դատարկ աչքեր, նավթոտ ձեռքեր, նրանց ուտելիքը փաթաթված էր թերթի թղթով: Մինչև մի կտոր խոզի ճարպն ուտելը, նրանք դանակով քերում էին դրա վրայից սեւ տպագրաներկը: Երկու տարի անցավ նույն առօրեական վարգով: Մի օրը նմանվում էր մյուսին: Երրորդ տարում օրերի նույնականությունն ավարտվեց: Մի շաբաթվա ընթացքում երեք անգամ վաղ առավոտյան իմ գրասենյակ եկավ պսպղուն կապույտ աչքերով մի ծանրամարմին, հաստուկր մարդ, մի հսկա՝ գաղտնի ծառայությունից: Առաջին անգամ նա ինձ հենց ոտքի վրա հանդիմանեց եւ հեռացավ:

Երկրորդ այցին հանեց իր սպորտային բաճկոնը, կախեց այն պահարանի բանալուց եւ նստեց: Այդ առավոտյան ես տնից վարդակակաչներ էի բերել եւ տեղավորում էի դրանք ծաղկամանում: Նա նայեց ինձ ու գովեց անսովոր մարդաձանաչողությունս: Նրա ձայնը երկիմաստ երանգներ ուներ: Ես ինձ

անհարմար զգացի: Ես առարկեցի նրա գովեստը եւ հավատացրի, որ կողմնորոշվում եմ վարդակակաչների եւ ոչ՝ մարդկանց հարցում: Նա չարացած ասաց, որ ինքն ինձ ավելի լավ է ճանաչում, քան ես՝ վարդակակաչները: Հետո նա իր բաճկոնը զցեց թեւին ու հեռացավ:

Երբորդ այցելությանը նա նստեց, իսկ ես մնացի կանգնած, որովհետեւ նրա պայուսակն իմ աթոռի վրա էր: Ես չհամարձակվեցի այն գետնին դնել: Նա ինձ նախատեց՝ անվանելով հիմար, ծույլ, թեթեւաբարո, փչացած, իսկը՝ թափառաշրջիկ մի քած: Վարդակակաչները նա հրեց համարյա մինչեւ սեղանի ծայրը, իսկ սեղանի կենտրոնում դրեց մի դատարկ թուղթ եւ մի գրիչ: Նա մրթմրթաց՝ գրել: Ես կանգնած գրեցի այն, ինչ նա ինձնից պահանջում էր՝ անունս, ծննդյան թիվս եւ հասցես, սակայն հետո էլ՝ որ, անկախ մտերմություններից եւ բարեկամական կապերից, ոչ մեկին չպիտի ասեմ, որ ես... եւ ահա այդ սարսափելի բառը՝ *colaborez...* որ ես համագործակցում եմ: Ես այդ բառը չգրեցի: Ես վայր դրեցի գրիչը, մոտեցա պատուհանին եւ նայեցի դուրս՝ փոշոտ փողոցին: Այն ասֆալտապատ չէր. խոռեր էին ու կուզիկ տներ: Այդ ավերված նրբանցքը կրում էր նաեւ *Strada Gloriei* անունը՝ Փառքի Փողոց: Փառքի Փողոցում, մերկ թթենու վրա մի կատու էր նստել: Դա գործարանի՝ փրթված ականջով կատուն էր: Նրա վերելում վաղորդյան արեւն էր՝ նման ոսկե թմբուկի: Ես ասացի. *Nam caracterul*, ես այդպիսի բնավորություն չունեմ: Ասացի դեպի դուրս՝ փողոցին: ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ բառը հիստերիայի հասցրեց գաղտնի ծառայության գործակալին: Նա պատառոտեց թուղթը եւ կտորտանքը զցեց հատակին: Հետո հավանաբար նրա միտն ընկավ, որ իր տնօրենին պիտի ներկայացնի հավաքագրման փորձը, որովհետեւ կռացավ, հավաքեց բոլոր կտորները եւ լցրեց դրանք իր պայուսակի մեջ: Հետո նա խորը հառաչեց եւ, գիտակցելով իր պարտությունը, վարդակակաչներով ծաղկամանը պատով տվեց: Այն փշրվեց, եւ կոճոնոց լավեց, կարծես օդում ատամներ լինեին: Պայուսակը թեւի տակ՝ նա ցածրաձայն ասաց. Դու դեռ կզոջաս, մենք կխեղդենք քեզ գետում: Ես, կարծես ինքս ինձ էի ասում, նետեցի. Եթե ես դա ստորագրեմ, այլեւս չեմ կարողանա ինձ հետ ապրել, այդժամ ես ինքս կխեղդվեմ: Ավելի լավ է՝ Դուք արեք: Գրասենյակի դուռը բաց էր, նա հեռացել էր: Իսկ դրսում, *Strada Gloriei* փողոցում, գործարանի կատուն ծառից տան կտուրն էր թռել: Մի ճյուղ էր զսպանակում ինչպես բատուտ:

Հաջորդ օրն սկսվեց քաշքշուկը: Ես պետք է չքվեի գործարանից: Ամեն առավոտ ժամը վեցն անց կեսին ես պետք է ներկայանայի տնօրենին: Ամեն առավոտ նրա մոտ էին լինում արհմիության տնօրենն ու կուսակցական կազմակերպության քարտուղարը: Ինչպես ժամանակին մայրիկի «թաշկինակ ունե՞ս»ը, հիմա էլ տնօրենն էր ամեն առավոտ հարցնում. Ուրիշ աշխատանք գտե՞լ ես: Ես ամեն անգամ նույնն էի պատասխանում. Ես չեմ էլ փնտրում, ինձ այստեղ՝ գործարանում էլ է դուր գալիս, ես ուզում եմ մինչեւ թոշակի գնալս այստեղ մնալ:

Մի առավոտ էլ, երբ ես աշխատանքի գնացի, հաստափոր բառարաններս հատակին էին շենքին, գրասենյակի դռան մոտ: Ես բացեցի դուռը, գրասենյակիս մոտ մի ինժեներ էր նստել: Նա ասաց. Այստեղ մտնելիս դուռը ծեծում են: Այստեղ ես եմ նստում, դու այստեղ անելիք չունես: Տուն գնալ չէի կարող, այլապես առանց հարգելի պատճառի բացակայությունս ինձ հեռացնելու հարմար առիթ կստեղծեր: Ես գրասենյակ չունեի, պետք է այժմ հատկապես ամեն օր ճիշտ ժամանակին աշխատանքի գնայի, ոչ մի դեպքում չպետք է բացակայեի:

Ընկերուհիս, որին ամեն օր Strada Gloriei կեղտոտ փողոցով անցնող տունդարձի ճանապարհին ամեն ինչ պատմում էի, ինձ համար մի անկյուն ազատեց իր գրասենյակի վրա: Սակայն մի առավոտ նա կանգնեց գրասենյակի դռան մոտ եւ ասաց. Ես չպետք է քեզ ներս թողնեմ: Բոլորն ասում են, որ դու լրտես ես: Մանրամասներ հայտնի դարձան: Բամբասանքը գործընկերների մեջ շրջանառվեց: Դա վատթարագույնն էր: Հարձակումներից կարելի է պաշտպանվել, գրապարտության դեմ մարդն անգոր է: Ամեն օր ես պատրաստ էի ամեն ինչի, նույնիսկ մահվան: Սակայն այս խարդավանքը հաղթահարել չէի կարողանում: Ոչ մի պատրաստվածություն այն տանելի չէր դարձնում: Զրպարտությունը աղբով է լցնում, խեղդվում ես, որովհետեւ չես կարող պաշտպանվել: Գործընկերների կարծիքով ես հենց այն էի, ինչը մերժում էի: Եթե ես լրտեսեի նրանց, նրանք ինձ առանց վարանելու կվստահեին: Փաստորեն, նրանք պատժում էին ինձ, քանզի ես խնայել էի իրենց: Քանի որ հիմա հատկապես չպետք է բացակայեի, սակայն գրասենյակ չունեի, եւ ընկերուհիս էլ չէր կարող ինձ իր գրասենյակ ներս թողնել, ես անվճարակապակց կանգնեցի սանդղավանդակում: Մի քանի անգամ աստիճաններով վեր ու վար գնացի. հանկարծ նորից դարձա մայրիկիս երեխան, քանի որ ԹԱՇԿԻՆԱԿ ՈՒՆԵԻ: Ես փռեցի այն առաջին եւ երկրորդ հարկերի միջեւ գտնվող աստիճաններից մեկին, հարթեցի ու նստեցի վրան: Հաստափոր բառարաններս դրեցի ծնկներիս եւ անցա ջրաբաշխ մեքենաների նկարագրությունների թարգմանությանը: Ես սանդղակատակ էի, իսկ գրասենյակս թաշկինակ էր: Ընկերուհիս կեսօրի ընդմիջումներին նստում էր կողքիս՝ աստիճաններին: Մենք միասին ուտում էինք, ինչպես նախկինում՝ նրա, դրանից առաջ էլ՝ իմ գրասենյակում: Բակի բարձրախոսից, ինչպես միշտ, աշխատողների երգչախմբերը երգում էին ժողովրդի երջանկությունից: Նա ուտում էր եւ սգում իմ բախտը: Ես՝ ոչ: Ես պիտի պինդ մնայի: Դեռ երկար: Մի քանի հավերժական շաբաթ, մինչեւ ինձ կհեռացնեն:

Այն ժամանակահատվածում, երբ ես սանդղակատակ էի, թերթել էի բառարանը՝ գտնելու, թե էլ ինչ բառեր կան ՍԱՆԴՈՒՂՔԻ հետ կապված: Սանդղաքի առաջին աստիճանը կոչվում է ANTRITT, վերջին աստիճանը՝ AUSTRITT: Հորիզոնական աստիճանները կողքերից հարմարեցված են ՍԱՆԴՂԱԿԱԼՆԵՐԻՆ[1]: Իսկ առանձին աստիճանների միջեւ գտնվող անցքերը կոչվում են TREPPENAUGEN[2]: Ես էլի գեղեցիկ բառեր գիտեի՝ ջրաբաշխական նավթոտ մեքենաների դետալների անվանումները. SCHWALBENSCHWANZ (ԾԻԾԵՌՆԱԿԻ

ՊՈՉ), SCHWANENHALS (ԿԱՐԱՊԻ ՎԻՉ), պտուտակի ամրացման հենարանը կոչվում է SCHRAUBENMUTTER (ՊՏՈՒՏԱԿԱՄԵՐ): Ինձ նմանապես շփոթեցնում էին սանդուղքի մասերի բանաստեղծական անուններն ու տեխնիկական լեզվի գեղեցկությունը: TREPPENWANGEN, TREPPENAUGEN. ստացվում է որ սանդուղքը դեմք ունի: Փայտից լինի, թե՛ քարից, բետոնից, թե՛ երկաթից՝ ինչո՞ւ են մարդիկ նույնիսկ ծանրաշարժ իրերի մեջ իրենց սեփական կերպարանքը ներկառուցում, ինչո՞ւ են անկենդան նյութին իրենց սեփական մսի անունը տալիս, անձնավորում որպես մարմնի մասեր: Արդյո՞ք տեխնիկայի մասնագետների աշխատանքը միայն թաքցված քնքշանքի շնորհիվ է տանելի դառնում: Յուրաքանչյուր ր աշխատանք է յուրաքանչյուր մասնագիտության մեջ նույն սկզբունքով ընթանում, ինչպես մայրիկի թաշկինակի հարցը:

Մանկությանս տարիներին տանը թաշկինակների դարակ կար: Դրա մեջ երկու շարքով հաջորդաբար երեքական կապոց էր դրված:

Չախից՝ հայրիկի եւ պապիկի՝ տղամարդու թաշկինակները:
Աջից՝ մայրիկի եւ տատիկի կանացի թաշկինակները:
Մեջտեղում՝ իմ մանկական թաշկինակները:

Դարակը մեր ընտանիքի պատկերն էր թաշկինակների տեսքով: Տղամարդու թաշկինակներն ամենամեծն էին, ունեին շագանակագույն, գորշ կամ մուգ կարմիր եզրագծեր: Կանացի թաշկինակներն ավելի փոքր էին, նրանց եզրագծերը՝ բաց կապույտ, կարմիր կամ կանաչ: Մանկական թաշկինակներն ամենափոքրն էին, առանց եզրերի, սակայն սպիտակ քառակուսու մեջ ծաղիկ կամ կենդանի նկարած: Բոլոր երեք տեսակի թաշկինակները բաժանվում էին աշխատանքային օրերի թաշկինակների՝ առաջին շարքում, եւ կիրակնօրյա թաշկինակների՝ հետեւի շարքում: Կիրակի օրերին թաշկինակը պետք է համապատասխաներ հագուստի գույնին, անգամ եթե չէր երեւալու:

Ոչ տնային առարկաները, ոչ անգամ մենք՝ ինքներս, այնքան կարեւոր չէինք, ինչքան թաշկինակները: Դրանց գործածումը համակողմանի էր՝ հարբուխի, քթի արնահոսության ժամանակ, վիրավորված ձեռքը, արմունկը կամ ծունկը կապելիս, լացելիս կամ էլ լացը զսպելու համար կծելիս: Թաց, սառը թաշկինակը ճակատին՝ գլխացավի դեմ էր: Անկյուններում չորս հանգույցով թաշկինակը գլխանոց էր տոթի կամ անձրեւի դեմ: Հանգուցած թաշկինակն ինչոր բանի հիշեցում էր: Ծանր պայուսակներ կրելիս ձեռքը փաթաթվում էր թաշկինակով: Երբ գնացքը հեռանում էր կայարանից, թաշկինակը դառնում էր հրաժեշտի ծածանում: Եւ քանի որ գնացքը ռումիներեն TREN է կոչվում եւ արցունքները Բանաստյան բարբառով՝ TRժN, գնացքի չիկչիկոցը երկաթգծերին գլխումս նույնանում էր լացի հետ: Երբ գյուղում՝ տանն ինչոր մեկը մահանում էր, իսկույն նրա գլխի շուրջը թաշկինակ էին կապում, որպեսզի, երբ դիակի քարացումն ավարտվի, բերանը փակ մնա: Երբ քաղաքում՝ ճամփեզրին ինչոր մեկն ընկնում էր, միշտ գտնվում էր մի անցորդ, որը մահացածի

դեմքը ծածկում էր իր թաշկինակով. այսպիսով թաշկինակը հանգուցյալի հոգու խաղաղության դուռն էր բացում: Ամառային տաք օրերին ծնողներն իրենց երեխաներին ուշ երեկոյան ուղարկում էին գերեզմանոց՝ ծաղիկները ջրելու: Երկուսով կամ երեքով, մենք միասին էինք մնում մի գերեզմանից մյուսին անցնելիս եւ արագ էինք ջրում: Հետո իրար կպած նստում էինք մատուռի աստիճաններին եւ նայում, թե ինչպես են որոշ գերեզմաններից ծխի քուլաներ բարձրանում: Մեզ թվում էր, թե դրանք մահացածների հոգիներն են. կենդանիների կերպարանքներ, ակնոցներ, շշեր եւ բաժակներ, ձեռնոցներ եւ գուլպաներ: Եվ դրանց մեջ այստեղ ու այնտեղ գիշերվա սետով եզերված մի սպիտակ թաշկինակ: Ավելի ուշ, երբ ես գրույցներ էի ունենում Օսկար Պաստիորի հետ, նրա՝ խորհրդային ուղղիչաշխատանքային ճամբար արքայի մասին գրելու, նա պատմեց, որ մի ծեր ռուս մայրիկից մի բատիստե թաշկինակ էր ստացել: «Հավանաբար ձեր բախտը կրերի՝ քո եւ իմ որդու, եւ շուտով տուն կվերադառնաք», — ասել էր ռուս կինը Օսկարին: Նրա որդին Պաստիորի տարիքին էր, տնից նույնքան հեռու, որքան Օսկարը, սակայն ուրիշ ուղղությամբ՝ մի պատժիչ գումարտակում: Որպես սովից մեռնող մուրացիկ Օսկար Պաստիորը ծեծել էր նրա դուռը, ցանկացել էր փոխանակել մի մեծ կտոր անուխ մի կտոր ուտելիքի հետ: Կինը նրան տուն էր թողել եւ տաք ապուր տվել: Եւ քանի որ նրա քթից կաթել էր ափսեի մեջ, տվել էր նաեւ սպիտակ բատիստե թաշկինակը, որը դեռ ոչ ոք երբեք չէր գործածել: Ցանցկեն եզրերով, մետաքսաթելերով խնամքով ասեղնագործած ճառագայթներով ու վարդագարդերով թաշկինակը գեղեցկություն էր, որը գրկում եւ վիրավորում էր մուրացիկին: Դեղախառնուրդ էր. մի կողմից՝ բատիստե մխիթարանք, մյուս կողմից՝ մետաքսե ճառագայթներով, սպիտակ գծիկներով մի չափերիզ՝ նրա լքվածության սանդղակի վրա: Օսկար Պաստիորն ինքն էլ դեղախառնուրդ էր այդ տիկնոջ համար. կյանքից կտրված մուրացիկ՝ տանը եւ կորած երեխա՝ աշխարհում: Այս երկու անձերում էլ երջանիկ էր նա եւ պարտավորված՝ մի կնոջ վարմունքից, որն էլ ի՞ր համար էր երկու անձ. օտար ռուս կին եւ հոգատար մայր՝ ԹԱՇԿԻՆԱԿ ՈՒՆԵՍ հարցով:

Այս պատմությունն իմանալուց հետո ես նույնպես հարց ունեմ: ԹԱՇԿԻՆԱԿ ՈՒՆԵՍ՝ Սը ամենու՞ր է վավերական եւ, արդյո՞ք, սփռված է նաեւ աշխարհի կեսը բռնած՝ սառչելու եւ հալչելու միջեւ գոյող ձյան փայլքում: Անցնո՞ւմ է այն լեռների ու տափաստանների միջով, բոլոր սահմանների վրայով՝ մինչեւ պատժիչ եւ աշխատանքային ճամբարներով սփռված մի հսկայական կայսրություն: Հնարավոր չէ՞ ազատվել ԹԱՇԿԻՆԱԿ ՈՒՆԵՍ հարցից նույնիսկ մուրճ ու մանգաղով, նույնիսկ ստալինիզմի բազմաթիվ վերադաստիարակիչ ճամբարներով:

Չնայած տասնյակ տարիներ ռումիներեն եմ խոսում, միայն Օսկար Պաստիորի հետ ունեցած գրույցում առաջին անգամ նկատեցի, որ թաշկինակը ռումիներեն BATISTA է: Կրկին զգացական ռումիներենը, որն իր բառերը պարզապես համար պարտադրանքով իրերի սրտերից է որսում: Նյութը շրջապտույտ չի անում, ներկայանում է որպես ավարտուն թաշկինակ, որպես BATISTA: Կարծես թե

յուրաքանչյուր թաշկինակ ամեն պահի ու ամենուր Բատիստից լինի: Օսկար Պաստիրորը թաշկինակը պահպանել էր ճամպրուկում՝ որպես կրկնակ մոր ու կրկնակ որդու սրբազան հուշ: Եւ հետո հինգ ճամբարային տարուց հետո իր հետ տուն էր տարել: Ինչո՞ւ. նրա սպիտակ բատիստե թաշկինակը հույս էր ու վախ: Երբ զիջում ես հույսն ու վախը, մեռնում ես: Սպիտակ թաշկինակի մասին զրույցից հետո գիշերերվա կեսը Օսկար Պաստիրորի համար կոլաժ էի սոսնձում սպիտակ թղթին.

Այստեղ պարում են կետերը ասաց Բեան
մտնում ես կաթի երկարոտն բաժակը
սպիտակեղեն սպիտակ գորշականաչ ցինկե լոգարանում
վերադիր վճարի դեպքում համաձայնում են
համարյա բոլոր նյութերը
նայիր այստեղ
ես գնացքի մեկնումն եմ եւ
բալը օճառի տուփում
երբեք մի խոսիր անձանթ տղամարդկանց հետ եւ
հատկապես Կենտրոնի մասին

Երբ շաբաթվա վերջում գնացի նրա մոտ եւ ուզում էի նվիրել կոլաժը, նա ասաց. Պետք է սոսնձես նաեւ՝ ՕՍԿԱՐԻՆ: Ես ասացի. Ինչ որ քեզ եմ տալիս, քեզ է պատկանում: Չէ՞ որ դու դա գիտես: Նա ասաց. Դու պե՛տք է դա սոսնձես, թուղթը հավանաբար չգիտի: Ես այն նորից տուն տարա եւ սոսնձեցի՝ Օսկարին: Եւ հաջորդ շաբաթ կրկին նվիրեցի. կարծես մի անգամ առանց թաշկինակի հետ էի եկել եւ այժմ երկրորդ անգամ էի դարպասի մոտ՝ թաշկինակով: Թաշկինակով է ավարտվում նաեւ մեկ այլ պատմություն.

Պապիկիս եւ տատիկիս որդու անունը Մաթց էր: 30 տարեկանում նրան ուղարկեցին Թեմեսվար՝ առեւտրի գործակալի մասնագիտություն սովորելու, որպեսզի զբաղվի ընտանիքին պատկանող հացահատիկի առեւտրով եւ նպարեղենի խանութով: Դպրոցում դասավանդում էին ուսուցիչներ Գերմանական Կայսրությունից, իսկական նացիստներ: Մաթցն ուսումից հետո դիպլոմավորվել էր նաեւ որպես առեւտրի գործակալ, բայց գլխավորապես՝ որպես նացիստ. ուղեղի լվացում՝ ըստ ծրագրվածի: Մաթցն ուսումից հետո խանդավառ նացիստ էր, գլխովին փոխված: Նա հակահրեական նշանաբառեր էր բղավում, անհասանելի էր, ինչպես մի տկարամիտ: Պապիկս, որ իր ամբողջ կարողությունը դիզել էր միայն հրեա հաճախորդների վարկերի միջոցով, նրան բազմիցս հանդիմանում էր: Բայց երբ դա էլ չէր օգնում, նա ստիպված էր լինում ապտակել որդուն: Սակայն վերջինիս բանականությունը հոդս էր ցնդել: Նա գյուղական գաղափարակրի դեր էր խաղում, տանջում էր հասակակիցներին, որոնք կուչ էին գալիս ռազմաճակատի անունն իսկ լսելիս: Նա ռումինական բանակում գրասենյակային պաշտոն ուներ: Սակայն տեսականից մղվեց դեպի գործնականը, կամավոր ՏՏական դարձավ՝ ցանկանում էր

ռազմաճակատ գնալ: Մի քանի ամիս անց նա տուն վերադարձավ՝ ամուսնանալու: Ռազմաճակատում հանցագործությունների ակնատես լինելով, նա օգտագործեց գործող կախարդական բանաձեւը, որպէսզի մի քանի օրով խուսափի պատերազմից: Այդ կախարդական բանաձեւն ամուսնական արձակուրդն էր:

Տատիկս հետեւի դարակներից մեկում Մաթցի երկու լուսանկար ուներ՝ մի հարսանեկան եւ մի մահվան լուսանկար: Հարսանեկան լուսանկարում սպիտակ հագնված մի հարսնացու է՝ Մաթցից մի գլուխ բարձր, նիհար եւ լուրջ, մի գիպսե տիրամայր: Գլխին մումե պսակ է, նման տերեւակույտի: Կողքին Մաթցն է՝ նացիստական համազգեստով: Փեսացու լինելու փոխարեն նա զինվոր է: Մի ամուսնացող զինվոր եւ իր սեփական հայրենիքի վերջին զինվորը: Հազիվ էր վերադարձել ռազմաճակատ, եւ ահա՝ մահվան լուսանկարը: Նկարում ականից պատառոտված մի ամենավերջին զինվոր է: Մահվան լուսանկարը ձեռքի մեծության է. մի սեւ ակր, դրա մեջտեղում՝ մի սպիտակ թաշկինակ եւ մարդու մնացորդների մի գորշ կույտ: Սեւի մեջ սպիտակ թաշկինակն այնքան փոքր է, ինչքան մանկական թաշկինակը, որի սպիտակ քառակուսու մեջտեղում տարօրինակ նախշ է նկարված: Տատիկիս համար էլ այս նկարն է դեղախառնուրդ. սպիտակ թաշկինակի վրա մեռած նացիստ է, նրա հիշողության մեջ՝ կենդանի որդի: Տատս այս երկակի նկարը տարիներ ի վեր պահել էր աղոթագրքի մեջ: Նա աղոթում էր ամեն օր: Հավանաբար նրա աղոթքներն էլ էին երկիմաստ: Հավանաբար դրանք ջանում էին լցնել սիրելի որդուց մինչեւ մոլագար նացիստն առաջացած ճեղքվածքը եւ առասանակ էին խնդրում Աստծուց՝ այդ որդուն սիրելու եւ նացիստին ներելու:

Պապիկս Առաջին Համաշխարհային պատերազմի զինվոր էր: Նա գիտեր, թե ինչի մասին է խոսում, երբ իր որդի Մաթցի վերաբերյալ հաճախ եւ դառնացած ասում էր. Այո, երբ փողփողում են դրոշները, բանականությունը հօդս է ցնդում^[3] Այս զգուշացումը համապատասխանում է նաեւ հաջորդած դիկտատուրային, որում ես ինքս էլ ապրել եմ: Ամեն օր տեսնում ես մեծ ու փոքր սպեկուլյանտների բանականության բնաջնջումը: Ես որոշեցի չշեփորահարել:

Սակայն երեխա ժամանակ ստիպված էի կամքիս հակառակ ակորդեոն նվագել սովորել: Որովհետեւ տանը դրված էր մահացած զինվոր Մաթցի կարմիր ակորդեոնը: Ակորդեոնի կաշեփոկերը շատ երկար էին: Որպէսզի չսահեին ուսիցս, ակորդեոնի ուսուցիչը թաշկինակով կապում էր դրանք մեջքիս:

Կարո՞ղ ենք ասել, որ հենց ամենափոքր իրերը, շեփոր լինի, ակորդեոն կամ թաշկինակ, իրար են կապում կյանքում ամենաանհամատեղելին, որ իրերը պտտվում են եւ իրենց շեղումներում ունեն ինչոր բան, որը հնազանդվում է կրկնություններին՝ արատավոր շրջանին: Կարող ենք դրան հավատալ, բայց ոչ՝ ասել: Սակայն, ինչ չենք կարող ասել, կարող ենք գրել: Քանզի գրելը համր արարք է, աշխատանք՝ գլխից ձեռքին: Բերանը շրջանցվում է: Դիկտատուրայի ժամանակ ես շատ եմ խոսել, գլխավորապէս այն պատճառով, որ համարձակվել էի շեփոր չփչել:

Խոսելը մեծավ մասամբ անտանելի հետեւանքներ էր ունեցել: Սակայն գրելը սկիզբը էր առել լռության խորքերում, այնտեղ՝ գործարանի աստիճանների վրա, որտեղ ինքս իմ մեջ ավելին պիտի ստեղծեի, քան կարելի էր ասել: Այլևս անհնար էր խոսքով առագանել: Առավելագույնը՝ արտաքին լրացումները, սակայն՝ ոչ դրանց չափը: Դեպքերի զարգացումը ես կարող էի միայն համրորեն հեզել մտքումս՝ արատավոր շրջանում բառեր գրելիս: Մահվան վախին ես հակազդում էի կյանքի ծարավով: Դա բառի ծարավ էր: Միայն բառերի հողմապտույտը կարող էր դրությունս հասկանալ: Նա հեզում էր այն, ինչ բերանով չէր կարելի ասել: Ես կրնկակոյս հետեւում էի ապրվածին՝ բառերի արատավոր շրջանի մեջ, քանի դեռ ինչոր բան ինձ մինչ այդ անծանոթ կերպով չէր հայտնվում: Իրականությանը զուգահեռ գործի էր անցնում բառերի մնջախաղը: Նա չի ընդունում ոչ մի իրական չափում, սեղմում է գլխավոր բաները եւ ընդլայնում երկրորդականները: Բառերի արատավոր շրջանը մոզական տրամաբանության նման մի բան է փաթաթում ապրվածի վզին: Բառերի մնջախաղն անբռնազբոս է եւ իր խոնջության մեջ երկյուղածորեն մոլեգնոտ մնացող: Դիկտատուրա թեման սեփական նախաձեռնությամբ է մասնակցում, քանզի ակներեությունն այլևս երբեք չի վերադառնա, եթե արդեն ամբողջովին կողոպտվել է: Տրամաբանորեն թեման այնտեղ է, սակայն ինձ զավթում են բառերը: Նրանք թեման քաշում են իրենց հետեւից, ուր որ ցանկանան: Ամեն ինչ այլևս սուտ է եւ ամեն ինչ ճիշտ է:

Որպես սանդղակատակ ես այնքան միայնակ էի, ինչքան երեխա ժամանակ գետահովտում կովերին արածեցնելիս: Ես տերեւներ ու ծաղիկներ էի ուտում, որպեսզի դրանցից մեկը լինեմ, որուհետեւ իրենք գիտեին, թե ինչպես է պետք ապրել, իսկ ես՝ ոչ: Ես դիմում էի նրանց իրենց անուններով: Կաթնային ուղտափուշ անունը պետք է որ իսկապես էլ փշփշոտ բույսը լիներ՝ իր ցողունի միջի կաթով: Սակայն բույսը Կաթնային ուղտափուշ անունին չէր արձագանքում: Ես փորձեցի դիմել մտացածին անուններով. ՓՇԱԿՈՂ, ՓՇԱՏԵՐԵԻԱՎԻԶ, որոնց մեջ ոչ կաթը կար, ոչ էլ՝ ուղտափուշը: Իրական բույսի առջեւ փռած բոլոր կեղծ անունների պատրանքում անցք էր բացվում դեպի ունայնություն. անպատվություն էր, քանզի ընդամենն ինքս ինձ էի բարձրաձայն դիմել, ու ոչ թե՛ բույսին: Սակայն անպատվությունն ինձ օգտակար էր: Ես հոգ էի տանում կովերի, իսկ բառերի հունչը՝ իմ մասին: Ես զգում էի.

Դեմքի վրա հայտնված ամեն բառ
գիտի ինչոր բան արատավոր շրջանից
եւ լռում է

Բառի հունչը գիտի, որ պիտի խաբի, քանզի իրերը խաբում են իրենց նյութերով, զգացմունքներն՝ իրենց ժեստերով: Հատման տեղում, որտեղ հանդիպում են նյութերի եւ ժեստերի պատրանքները, բնավորվում է բառահունչն իր մտացածին ճշմարտությամբ: Գրելիս վստահության մասին խոսք լինել չի կարող, ավելի շուտ՝

պատրանքի բարեխղճության: Այն ժամանակ գործարանում, երբ ես՝ սանդղակատակ, իսկ թաշկինակը՝ գրասենյակս էր, բառարանում գտել էի նաեւ TREPPENZINS (ԱՃՄԱՆ ՏՈՎՈՍԱԴՐՈՒՅՔ) գեղեցիկ բառը: Դա նշանակում է պարտքի տոկոսադրույքի աստիճանական աճ: Աճող տոկոսադրույքները ումանց համար ծախսեր են, ումանց համար էլ՝ եկամուտ: Գրելիս, ինչքան շատ ես խորանում տեքստում, այդ երկուսն այնքան շատ են նույնանում: Ինչքան շատ է գրվածն ինձ կողողպտում, այնքան շատ է ցույց տալիս ապրվածին, թե ինչ չկա ապրումի մեջ: Միայն բառերն են դա հայտնաբերում, քանզի նախօրոք չգիտեն: Որտեղ նրանք զարմացնում են Ապրվողին, այնտեղ էլ լավագույնս արտացոլում են այն: Նրանք այնքան համառ ու պարտադիր են դառնում, որ Ապրվողը պետք է կառչի նրանցից, որպեսզի չփլուզվի:

Ինձ թվում է՝ իրերը չգիտեն իրենց նյութերը, ժեստերը չգիտեն իրենց զգացմունքները եւ բառերը՝ բերանը, որը խոսում է: Սակայն մեզ անհրաժեշտ են իրերը, ժեստերն ու բառերը՝ ապահովագրելու մեր սեփական գոյությունը: Ինչքան ավելի շատ բառ ենք սեփականում, այնքան, այնուամենայնիվ, ավելի ազատ ենք: Երբ բերանը մեզ արգելվում է, մենք փորձում ենք կանգուն մնալ ժեստերի, նույնիսկ առարկաների միջոցով: Դրանք բացատրելը դժվար է, եւ դրանք որոշ ժամանակ կասկածից դուրս են մնում: Այդպես դրանք կարող են օգնել մեզ՝ ստորացումները վերածել պատվի, որը որոշ ժամանակ կասկածից դուրս է մնում:

Ռումինիայից տարագրվելուցս քիչ առաջ մորս տանելու եկան ոստիկանները: Նա արդեն դարպասի մոտ էր, երբ միտն ընկավ. ԹԱՇԿԻՆԱԿ ՈՒՆԵ՞Մ: Նա չունէր: Չնայած, որ ոստիկանն անհամբեր էր, նա տուն վերադարձավ եւ թաշկինակ վերցրեց: Ոստիկանը մոլեգնում էր պահնորդական բաժնում: Մորս ռումիներենը բավարար չէր՝ հասկանալու նրա գոռոցը: Հետո նա դուրս եկավ գրասենյակից եւ փակեց դուռը դրսից: Մայրս ամբողջ օրը փակված նստեց այնտեղ: Առաջին մի քանի ժամը նա նստեց ոստիկանի սեղանի մոտ ու լացեց: Հետո այս ու այնկողմ քայլեց եւ սկսեց արցունքներից թրջված թաշկինակով կահույքի փոշին վերցնել: Հետո վերցրեց անկյունից դույլն ու պատի մեխից՝ սրբիչը եւ լվաց հատակը: Ես սարսափեցի, երբ նա պատմեց: Ինչպե՞ս կարող էիր մաքրել նրա գրասենյակը, հարցրեցի ես: Նա առանց վարանելու պատասխանեց, եւ աշխատանք էի փնտրում, որպեսզի կարճեմ ժամանակը: Իսկ գրասենյակն այնքան կեղտոտ էր: Լավ է, որ տղամարդու մեծ թաշկինակներից էի վերցրել:

Հիմա եմ միայն հասկանում, որ նա լրացուցիչ, սակայն կամավոր ստորացմամբ ապահովեց իր պատիվն այդ կալանքի ժամանակ: Մի կոլաժում ես փորձել եմ դրան համապատասխան բառեր գտնել.

Ես մտածեցի տոկուն վարդի մասին սրտում
անօգուտ հոգու՝ ինչպես մաղ

սակայն տերը հարցրեց.
ով է իշխելու
ես ասացի. կաշին փրկելը
նա ճշաց. կաշին
ընդամենը մի պուտ անարգված բատիստ է
առանց բանականության

Կուզեի մի նախադասություն ասել բոլոր նրանց, որոնց պատիվն ամեն օր՝
ցայսօր դիկտատորության օրոք խլում են: Եւ դա կլինէր նախադասություն
թաշկինակ բառով: Եւ դա կլինէր ԹԱՇԿԻՆԱԿ ՈՒՆԵ՝Ս հարցը: Հնարավոր է, որ
թաշկինակի վերաբերյալ հարցը վաղուց արդեն թաշկինակ չի ենթադրում, այլ՝
մարդու սաստիկ մենություն:

1. գերմ. TREPPENWANGEN, բառացի՝ ՍԱՆԴՈՒՂՔԻ ԱՅՏԵՐ – Ծ. Թ.
2. բառացի՝ ՍԱՆԴՈՒՂՔԻ ԱԶՔԵՐ – Ծ. Թ.
3. բնագրում դարձվածք է՝ «շեփոր» բառի գործածությամբ, որը
հնարավորություն է տալիս հեղինակին՝ ստորեւ բառախաղ անելու – Ծ. Թ.: